ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468
16035

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 35 (411)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

***13 տարի առաջ՝ 2003թ. հոկտեմբերի 1-ին, լույս տեսավ «Սյունյաց երկիր» թերթի անդրանիկ համարը:***

Շնորհավորում ենք եւ մաղթում հաջողություններ՝ ի բարօրություն Հայաստանի Հանրապետության:

**«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»**

***ԱՅՑԵՔԱՐՏ***

Ծնվել է 1963թ. օգոստոսի 14-ին Ստեփանակերտում: 1980-1985թթ. սովորել է Երեւանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում: 1985-1996թթ. աշխատել է ՀՀ պետպլանի հաշվողական կենտրոնում, գիտության եւ մշակույթի գործիչների ասոցիացիայում, միաժամանակ դասավանդել է ԵՊՀ-ում: 1996-1998թթ. աշխատել է «Հայէներգո» ՊՁ-ում՝ գլխավոր տնօրենի տեղակալ, 1998-2001թթ.՝ «Հայէներգո» ՓԲԸ-ում՝ գլխավոր տնօրեն: 2001թ. նշանակվել է ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ, 2001-2010թթ. եղել է «Հայռուսգազարդ» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն: 2008թ. ընտրվել է «Առէկսիմբանկ» ՓԲԸ խորհրդի նախագահ, 2009թ.՝ ՀՀԿ համամասնական ցուցակով Երեւան քաղաքի ավագանու անդամ: 2010-2011թթ. եղել է Երեւանի քաղաքապետ, 2011-2016թթ.՝ «Գազպրոմբանկ» ԲԲԸ առաջին փոխնախագահ, 2012-2016թթ.՝ «Գազպրոմ Մեժրեգիոնգազ» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ:
2016թ. սեպտեմբերի 13-ին ստանձնել է ՀՀ վարչապետի պաշտոնը:
1989թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:
2006թ. ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով, 2008թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով՝ «Անանիա Շիրակացի» մեդալով: 2010թ. ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, ունի 32 գիտական աշխատանք:
Ամուսնացած է, ունի երեք երեխա:

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ՝ 2-ՐԴ ԷՋՈՒՄ**




ՖՈՏՈԼՈՒՐ

# Մարզխորհրդի հերթական նիստը

**Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ մարզխորհրդի հերթական նիստը:**

Նիստի օրակարգի առաջին հարցը մարզում աշնանացանի աշխատանքների ընթացքի վերաբերյալ էր, որ ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը: Նա նշեց, որ մարզում այս տարի ցանքատարածությունները կազմել են 35558.3 հա, որից՝ հացահատիկային մշակաբույսեր՝ 26338.6 հա (աշնանացան՝ 17309 հա, գարնանացան՝ 4789 հա, 3882.5 հա գարնանացան այլ մշակաբույսեր (հաճար, վարսակ, գարի)), որն ամբողջությամբ հնձվել է: 1097.86 հա բանջարաբոստանային կուլտուրաներից հավաքվել է 620 հա-ը, 1770.6 հա կարտոֆիլի ցանքսից՝ 800 հա-ը, 2558 հա պտուղ-հատապտղից՝ 2450 հա-ը: Բերքահավաքն ու կերի կուտակումը դեռ ընթացքի մեջ են եւ կանխատեսված 130000 տ-ից այսօրվա դրությամբ կուտակվել է 129500 տ խոտ: Կատարվել է մոտ 5000 հա աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանք: Մարզին հատկացված վառելիքի եւ ազոտական պարարտանյութի տրամադրման հարցերը բնականոն ընթացքի մեջ են:

ՀՀ պետական բյուջեով եւ այլ միջոցներով մարզին վերաբերող ծրագրերի կատարման ընթացքի մասին ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հարություն Հովհաննիսյանը: Ըստ ոլորտների ներկայացնելով հատկացումները՝ նշեց, որ թերակատարումներ չկան. մարզի համար նախատեսված 8 մլրդ 327 մլն 880 հազար դրամի դիմաց 9 ամսվա կտրվածքով նախատեսվել էր հատկացնել 5 մլրդ 599 մլն 269 հազար դրամ, որից փաստացի ֆինանսավորվել է 5 մլրդ 440 մլն 583 հազար (97.2 տոկոս):

Մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի հիմնական միջոցառումների պլանի կատարման ընթացքի մասին տեղեկացրեց ՀՀ ԱԻ նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզի փրկարարական վարչության պետ, փոխգնդապետ Բագրատ Զաքարյանը: Նա նշեց, որ պլանով եւ ծրագրերով նախատեսված բոլոր միջոցառումները՝ ընդհանուր եւ օպերատիվ տակտիկական պատրաստության, փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման, արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ հետեւանքների վերացման, քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ, Սյունիքի մարզային փրկարարական վարչության, մարզպետարանի եւ քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կողմից իրականացվել են:

Ելույթ ունեցան նաեւ Գորիս ու Մեղրի բազմաբնակավայր համայնքների նորընտիր ղեկավարներ Վաչագան Ադունցը եւ Մխիթար Զաքարյանը, ովքեր խոստացան ամենայն պատասխանատվությամբ կատարել իրենց պարտականությունները՝ արդարացնելով ընտրողների ակնկալիքները:

Նիստն ամփոփեց մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ով շնորհավորեց նորընտիր ղեկավարներին՝ մաղթելով նրանց հաջողություններ ու բեղմնավոր աշխատանք, ինչպես նաեւ կոչ արեց հոկտեմբերի 2-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունները նույնպես կազմակերպել բաց ու թափանցիկ:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**29 սեպտեմբերի 2016թ.**

# ՀՀ անկախության 25-ամյակը՝ մարզկենտրոնում

**ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումները մարզկենտրոնում մեկնարկեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցած Հանրապետական մաղթանքով, որ ներկաներին հղեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը եւ Կապանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը:**

Գարեգին Նժդեհի անվան հրապարակում Կապանի N զորամասի հրամանատար, գնդապետ Կարեն Միրզոյանը շնորհավորեց ներկաներին, ինչեց առաջին բանակային զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Տիգրան Փարվանյանի շնորհավորական ուղերձը: Առաջին բանակային զորամիավորման հրամանատարության կողմից պատվոգրեր ստացան Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՀՄ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը, կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արսեն Գրիգորյանը, ազատամարտիկներ: Արդեն ավանդական դարձած եւ հատկապես փոքրիկների համար սպասված Կապանի N զորամասի հետախուզական վաշտի ցուցադրական ելույթները, տեղի ունեցած զորահանդեսը հպարտություն ու ոգեւորություն պարգեւեցին ներկաներին:

Բաղաբուրջի հուշահամալիրում զոհված ազատամարտիկների շիրիմներին ծաղիկներ



խոնարհեցին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, երկրապահ կամավորականներ, բազում կապանցիներ:

էջ 3

## Հայաստանի Հանրապետության նոր կառավարության կազմը


**Վաչե Գաբրիելյան**
ՀՀ փոխվարչապետ, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար


**Աշոտ Մանուկյան**
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար


**Սուրեն Կարայան**
ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար


**Վահան Մարտիրոսյան**
ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար


**Արծվիկ Մինասյան**
ՀՀ բնապահպանության նախարար


**Իգնատի Առաքելյան**
ՀՀ գյուղատնտեսության նախարար


**Վարդան Արամյան**
ՀՀ ֆինանսների նախարար


**Արմեն Ամիրյան**
ՀՀ մշակույթի նախարար


**Հրաչյա Ռոստոմյան**
ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար


**Լեւոն Ալթունյան**
ՀՀ առողջապահության նախարար


**Արտեմ Ասատրյան**
ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար


**Արփինե Հովհաննիսյան**
ՀՀ արդարադատության նախարար


**Արմեն Երիցյան**
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար


**Հրանուշ Հակոբյան**
ՀՀ սփյուռքի նախարար


**Դավիթ Լոքյան**
ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար


**Էդվարդ Նալբանդյան**
ՀՀ արտաքին գործերի նախարար


**Վիգեն Սարգսյան**
ՀՀ պաշտպանության նախարար


**Լեւոն Մկրտչյան**
ՀՀ կրթության եւ գիտության նախարար


**Դավիթ Հարությունյան**
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

## 2016թ. սեպտեմբերի 18-ին եւ հոկտեմբերի 2-ին համայնքների ընտրված ղեկավարները Սյունիքի մարզում


**Մխիթար Զաքարյան**
Մեղրի համայնքի ղեկավար


**Վաչագան Ադունց**
Գորիս համայնքի ղեկավար


**Մանվել Փարամազյան**
Քաջարան քաղաքային համայնքի ղեկավար


**Աշոտ Հայրապետյան**
Կապան համայնքի ղեկավար


**Արթուր Սարգսյան**
Սիսիան համայնքի ղեկավար

Սեպտեմբերի 18-ին համայնքի ղեկավարի եւ ավագանու ընտրություններ են տեղի ունեցել Գորայք եւ Տեղ խոշորացված համայնքներում:

Հոկտեմբերի 2-ին համայնքի ղեկավարի ընտրություններ են տեղի ունեցել նաեւ հետեւյալ համայնքներում՝ Ագարակ (գյուղ), Անտառաշատ, Առաջաձոր, Գեղանուշ, Գեղի, Դավիթբեկ, Եղվարդ, Լեռնաձոր, Խդրանց, Ծավ, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նոր Աստղաբերդ, Նորաշենիկ, Շիկահող, Շրվենանց, Սեւաքար, Սյունիք, Սրաշեն, Վանեք, Ներքին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Քաջարան (գյուղ), Դաստակերտ, Աղիտու, Անգեղակոթ, Բալաք, Բնունիս, Բռնակոթ, Գետաթաղ, Թասիկ, Իշխանասար, Լծեն, Հացավան, Մուցք, Նորավան, Շաղատ, Շաքի, Շենաթաղ, Որոտան (Սիսիան), Սալվարդ, Վաղատին, Տոլորս, Ույծ:

Հոկտեմբերի 2-ին ավագանու ընտրություններ են տեղի ունեցել նաեւ հետեւյալ համայնքներում՝ Կապան (քաղաք), Ագարակ (գյուղ), Աղվանի, Աճանան, Արծվանիկ, Առաջաձոր, Գեղանուշ, Գեղի, Դավիթբեկ, Եղվարդ, Լեռնաձոր, Խդրանց, Ծավ, Կաղնուտ, Չորաստան, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շրվենանց, Սեւաքար, Սյունիք, Սրաշեն, Վարդավանք, Վանեք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ուժանիս, Քաջարան (գյուղ), Օխտար, Սիսիան (քաղաք), Դաստակերտ, Ախլաթյան, Աղիտու, Անգեղակոթ, Աշոտավան, Բալաք, Բնունիս, Բռնակոթ, Գետաթաղ, Դարբաս, Թանահատ, Թասիկ, Լծեն, Լոր, Հացավան, Մուցք, Շաղատ, Շենաթաղ, Սալվարդ, Վաղատին, Տոլորս, Ույծ: ■

## Հոկտեմբերի 2-ին կայացած ՏԻՄ ընտրություններում Կապանի եւ Սիսիանի ավագանու ընտրված անդամների անվանացանկը

**Կապան համայնք**

Բաբայան Նարեկ Վարուժանի
Բադալյան Աիդա Շահենի
Գրիգորյան Վիլեն Սեյրանի
Դանիելյան Վահե Արմենի
Դավթյան Նարեկ Դավիթի
Դավթյան Սպարտակ Սերյոժայի
Հակոբյան Նարեկ Աշոտի
Մանուչարյան Արամ Վլադիմիրի
Մարտիրոսյան Էդգար Արամի
Մելիքյան Մուրադ Արշավիրի
Մեսրոպյան Նապոլեոն Մելսիկի
Մկրտչյան Արա Միքայելի
Մովսիսյան Ժան Վանյայի
Պետրոսյան Վահե Սոկրատի
Փարսադանյան Նիկոլայ Գագիկի

**Սիսիան համայնք**

Առաքելյան Հովսեփ Հրաչի
Բաբայան Համլետ Բենիկի
Գեւորգյան Գեւորգ Վիլիկի
Գրիգորյան Արման Վարդանի
Զաքարյան Արա Արտավազդի
Խաչատրյան Արա Կամոյի
Խոսրովյան Գագիկ Լանժետի
Հակոբջանյան Հայկ Սեւադայի
Համբարձումյան Դավիթ Վալերիկի
Հայրապետյան Հարություն Սլավիկի
Հարությունյան Արմեն Վարդանի
Ներսիսյան Նաիրա Վագների
Սաֆրազյան Բագրատունի Արտակի
Ստեփանյան Բագրատունի Արտակի
Վարդանյան Սուրեն Ռազմիկի

## Սեպտեմբերի 18-ին կայացած ՏԻՄ ընտրություններում ընտրված ավագանու անդամների անվանացանկը՝ ըստ համայնքների

# ՀՀ անկախության 25-ամյակը՝ մարզկենտրոնում





Մարատ Գերասիմյանին հանձնվում է հուշամեդալ



Վարդան Դավթյանին հանձնվում է հուշամեդալ



Ռազմիկ Փարսյանին հանձնվում է Երախտագիտության մեդալ

## *ՀՀ նախագահի հրամանագիրը Ս.Լ.Գրիգորյանին Մխիթար Գոշի մեդալով պարգեւատրելու մասին*

*Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով եւ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ որոշում եմ.*

*Հայաստանի Հանրապետության Անկախության 25-ամյակի առթիվ, իրավակարգի եւ օրինականության ամրապնդման գործում ներդրած ավանդի համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահ Սամվել Լեւոնի ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ պարգեւատրել Մխիթար Գոշի մեդալով:*

*Ð²Ú²êî²ÜÆ Ð²Üð²äºîàôÂÚ²Ü Ü²Ê²¶²Ð ê.ê²ð¶êÚ²Ü*

***2016թ. Սեպտեմբերի 17, Երեւան***
***ՆՀ- 874 -Ա***

էջ 1

Շատերն օգտվեցին Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգու տարածքում ծավալված ռազմադաշտային խոհանոցից: Այգու տարածքում բացված «Ես անկախության սերունդն եմ» խորագրով գեղարվեստական աշխատանքների ցուցահանդեսի հեղինակները Կապանի արվեստի դպրոցների եւ արվեստի քոլեջի սաներն էին, իսկ Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում բացվեց կապանցի երիտասարդ արվեստագետ Նարեկ Մինասյանի գեղանկարչական աշխատանքների անհատական ցուցահանդեսը:

Մանկական զբոսայգու բացօթյա դահլիճում անկախության սերնդին՝ մանուկներին, հաճելի երաժշտական ակնթարթներ պարգեւեցին «Վահան Մանուկյան» երգի ստուդիայի, ինչպես նաեւ քաղաքի երաժշտական դպրոցների, արվեստի մանկական դպրոցի եւ մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները:

Միջոցառումների շարքին հայրենասիրական շունչ հաղորդեց նաեւ Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի «Գարեգին Նժդեհ» ներկայացումից բեմադրված հատվածը:

Օրվա երկրորդ կեսը նշանավորվեց տարբեր բնագավառների ներկայացուցիչներին բարձրագույն պարգեւներ եւ կոչումներ հանձնելով: Մասնավորապես ղեկավարվելով 2005թ. փոփոխություններով ՀՀ սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով եւ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքը՝ Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով, Անկախության 25-ամյակի առթիվ, լրագրության բնագավառում ունեցած վաստակի համար «Սյունյաց երկիր» թերթի հիմնադիր եւ գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին շնորհվեց Հայաստանի Հանրապետության վաստակավոր լրագրողի պատվավոր կոչում: Նախագահի այլ հրամանագրերով, Անկախության 25-ամյակի առթիվ, Գորիսի N 2 հիմնական դպրոցի դասվար Ժասմեն Խաչատրյանը պարգեւատրվել է Մովսես Խորենացու, «Նորոգշին» ԲԲԸ տնօրեն Ռազմիկ Փարսյանը՝ Երախտագիտության, «Հայկժոս» ՍՊԸ գործադիր տնօրեն Սպարտակ Հակոբյանը՝ Երախտագիտության, Կապանի բժշկական կենտրոնի ավագ մանկաբարձուհի Էլմիրա Օհանյանը՝ Մխիթար Հերացու մեդալներով: Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության հուշամեդալով պարգեւատրվեցին նաեւ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, Տաթեւ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարատ Գերասիմյանը:



Էլմիրա Օհանյանին է հանձնվում Մխիթար Հերացու մեդալ

Կոչումներն ու մեդալները հանձնեց ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի պաշտոնակատար Դավիթ Լոքյանը, ով իր շնորհավորական խոսքում մասնավորապես նշեց. *«Սյունիքում ապրում է մի ժողովուրդ, որ լավագույնս է գիտակցում, թե ինչ է անկախությունը, որի համար ժամանակին նաեւ ինքն է պայքարել: Այս ժողովուրդը գենետիկորեն ունի այն գիտակցությունը, որ մարդկության, ազգի մեծագույն արժեքն անկախությունն է*»:



Սամվել Ալեքսանյանին հանձնվում է ՀՀ վաստակավոր լրագրողի պատվավոր կոչում

Մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ողջունելով ներկաներին, մասնավորապես նշեց. *«Մեր պապերը երազել են այս փառահեղ տոնի համար, բայց, բարեբախտաբար, մեզ բախտ վիճակվեց ձեռք բերել անկախություն, որի կերտման ճանապարհին անցանք մեր շատ սերնդակիցների կյանքի գնով եւ արյուն թափելով: Անկախությունը ձեւավորվեց մեր աչքի առաջ, իսկ Սյունիքն անկախության ամենախոշոր օրրաններից մեկն էր, որ Արցախի ժողովրդի հետ պայքարեց մինչեւ վերջ՝ ոչինչ չխնայելով»:*

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանն իր շնորհավորական խոսքում Հայաստանի Հանրապետությանը մաղթեց խաղաղություն եւ բարօրություն, անառիկ սահմաններ, կայուն տնտեսական զարգացում, նրա բնակիչներին՝ բարեկեցություն եւ լավատեսություն:

Տոնական միջոցառումների շարքն ամբողջացրին Կապանի մշակույթի պալատի երաժիշտ կատարողները, պարային համույթների սաներն ու տոնական հրավառությունը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Մեղրի համայնք**

Աշոտ Արմոյի Ադամյան
Կարեն Սերգեյի Ադամյան
Հարություն Լեռնիկի Ադամյան
Գագիկ Ռուբիկի Գեւորգյան
Խաչատուր Դավիթի Գեւորգյան
Հրայր Սասունի Զաքարյան
Գարեգին Սերոբի Հակոբյան
Սուրեն Վոլոդյայի Հայրապետյան
Հարութ Գրիշայի Հովհաննիսյան
Կոստանտ Ժուդեքսի Մարտիրոսյան
Սամվել Սանասարի Միքայելյան

**Գորիս համայնք**

Ռուստամ Սերժիկի Ակլունց
Արարատ Հրանտի Աղաբեկյան
Էրիկ Արթուրի Աղաջանյան
Լյովա Մարտունի Արզանյան
Միեր Սաշիկի Արզումանյան
Գարիկ Գագիկի Գեւորգյան
Դավիթ Արայի Դոլունց
Կարեն Սամվելի Լազարյան
Գրիգոր Սերժիկի Կարապետյան
Գուրգեն Ռոբերտի Կարապետյան
Մասիս Շուրայի Ղեւոնդյան
Սամվել Երվանդի Մաքունց
Արմեն Կիմայի Մկրտչյան
Ոսկան Նելսոնի Ոսկանյան
Նարեկ Գագիկի Օրդյան

**Քաջարան քաղաքային համայնք**

Մերուժան Լենդրոշի Աթայան
Արմեն Ռոբերտի Անդրեասյան
Արայիկ Երանոսի Առաքելյան
Սասուն Արամայիսի Առաքելյան
Արթուր Հրանտի Բադալյան
Գոռ Մերուժանի Գաբրիելյան
Գարիկ Հովնանի Իսրայելյան
Կարեն Արամայիսի Համբարձումյան
Վարուժան Ալեքսանդրի Հայրապետյան
Դերենիկ Սեյրանի Ստեփանյան
Նարեկ Սպարտակի Ստեփանյան

**Գորայք համայնք**

Աշոտ Բաբիկի Աղաջանյան
Կարեն Ֆյոդրի Գալստյան
Մուրադ Ռաֆիկի Գասպարյան
Մարտուն Ռաֆիկի Թադեւոսյան
Հրայր Գառնոյի Թորոսյան
Գեւորգ Արտավազդի Խոսրովյան
Գուրգեն Գրիշայի Մասումյան

**Տեղ համայնք**

Արտակ Զորիկի Աղաջանյան
Սիլվա Սամվելի Գալստյան
Սեւադա Վիտալիկի Դանիելյան
Արգամ Արամայիսի Լալայան
Գառնիկ Վազգենի Կարապետյան
Համեստ Սերյոժայի Հակոբյան
Արագած Ալիշի Դուլունց
Մասիս Մովսեսի Մկրտչյան
Արարատ Աշոտի Շադունց
Նարինե Նուրուշի Ջհանգիրյան
Սենիկ Սեյրանի Փարսյան

# ՀՀ ԶՈՒ բանակային 1-ին կորպուսի հրամանատար Տիգրան Փարվանյանին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում

**Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի 2016թ. սեպտեմբերի 7-ի հրամանագրով ՀՀ զինված ուժերի բանակային 1-ին կորպուսի հրամանատար Տիգրան Փարվանյանին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**



### Տ. Ջ. ՓԱՐՎԱՆՅԱՆԻՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով եւ հիմք ընդունելով «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածը՝ որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության առաջին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան ՋԱՆԻԲԵԿԻ ՓԱՐՎԱՆՅԱՆԻՆ շնորհել գեներալ-մայորի զինվորական կոչում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**
**Ս.ՍԱՐԳՍՅԱՆ**
**2016թ. Սեպտեմբերի 7, Երեւան, ՆՀ-649-Ա**

«Սյունյաց երկիր»-ը շնորհավորում է Տիգրան Փարվանյանին՝ զինվորական բարձր գնահատանքի արժանանալու կապակցությամբ եւ մաղթում նրան հաջողություններ՝ մեր երկրի հարավարեւելյան սահմանների պաշտպանության սրբազան գործում:

Մենք դեռ տեղյակ չէինք ՀՀ նախագահի հրամանագրին, բայց գիտեինք, որ սեպտեմբերի 21-ը հրամանատարի ծննդյան օրն է: Այդ առիթով էլ գրվել է ճանաչված լրագրող Ալվարդ Մեսրոպյանի հոդվածը՝ Տիգրան Փարվանյանի մարդկային ու զինվորական դիմանկարն ուրվագծող, որը ներկայացնում ենք ստորեւ:

## Տիգրան Փարվանյան. դիմանկարի ուրվագիծ

Մինչ հրամանատարի աշխատասենյակ մտնելը, հասցրի նրա հասցեին «բամբասանքներ» լսել: Դա սկսվեց բակից, ուր պատերին վահանակներ են փակցված: Դրանցից մեկի վրա կարդում եմ՝ գիտելիքներով հարուստ հրամանատարը մարտական խնդրի կատարման գրավականն է: Ու կողքից մի սպա ասում է՝ իսկ եւ իսկ մեր հրամանատարի մասին է ասված: Հարցնում եմ զրուցակցիս անուն-ազգանունը, չի ասում. երեւի «ռազմական գաղտնիք» է:

- Ոչ մի կերպ, - պատասխանում է նա:

Հետո էլ խոսակցության մեջ մտա քաղաքացիական հագուստով մեկի հետ:

- Մեր հրամանատարը ծնռանը, բքին, սառնամանիքին զինվորի հետ հավասար պատրոն է շալակել: Նա միայն հրամանատար չէ, նա զինվորի հայրն է : Նրա երկու տղան ծառայել են բանակում, բայց ոչ տաքուկ տեղերում՝ հետախույզ են եղել:

- Աղջիկ ունի՞:

- Ոչ մի կերպ:

Դարձյալ՝ ոչ մի կերպ: Ու սա ասում է ե՛ւ զինվորականը, ե՛ւ քաղաքացիական հագուստով մարդը, որ աշխատում է կորպուսում: Եվ ոչ մի կերպ չի ասում իր անուն-ազգանունը: Ես արդեն հասկանում եմ նրանց:

Գեղեցիկ, հաղթանդամ, ծիծաղկոտ աչքերով մի սպա ինձ հարցնում է՝ կասե՞ք՝ ինչո՞ւ եք հետաքրքրվում մեր հրամանատարով:

Ես նրան պատասխանում եմ իրենց նման՝ ոչ մի կերպ:

Իսկ հրամանատարը Տիգրան Փարվանյանն է: Հիշեցի զրուցակիցներիցս մեկի խոսքերը՝ իր ազգանվան նման եզակի մարդ է եւ հրամանատար: Կա հրամանատար, կա եւ իդեալական հրամանատար: Նա իդեալական ե՛ւ մարդ է, ե՛ւ հրամանատար:

Տիգրան Փարվանյանը սովորել է Վլադիկավկազի բարձրագույն համազորային հրամանատարական ուսումնարանում: Ավարտելուց հետո նշանակվել է հարավային զորքերի խմբավորման 19-րդ տանկային դիվիզիայի 37-րդ տանկային գնդի մոտոհրաձգային դասակի հրամանատար: Գունդը տեղակայված է եղել Հունգարիայում: Հունգարիայից հետո նրան տեղափոխել են Ուկրաինա: Երդման պահ էր: Տիգրան Փարվանյանը պիտի երդվեր՝ պատրաստ եմ ծառայելու հայրենիքիս եւ ժողովրդիս: Այդ պահին հայի արյունը եռաց նրա երակներում, հոգին ծառս եղավ, հոգին ըմբոստացավ եւ ասաց՝ չեմ երդվի: Իմ ժողովուրդը հայ ժողովուրդն է, հայրենիքս՝ Հայաստանը: Եվ 1992թ. տեղափոխվում է Հայաստան՝ իր պապուպապերի երկիրը, իր ժողովրդի մոտ, իր արյան մոտ:

Ռազմական գիտելիքները հարստացնելու նպատակով Տիգրան Փարվանյանը գործուղվում է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիա, որն ավարտելուց հետո վերադառնում է Հայաստան՝ զբաղեցնելով զինվորական տարբեր պաշտոններ: 2009 թվականից Գորիսում է եւ ղեկավարում է բանակային առաջին կորպուսը:

*– Կորպուսը մի մեծ ընտանիք է, եւ հրամանատարը պիտի վարպետորեն ղեկավարի: Զինվորը հրամանատարի երեխան է: Ինչպես ընտանիքում են երեխաները չարաճճիություններ անում, բանակում էլ զինվորները կարող են չարաճճիություններ անել: Եթե ընտանիքում երեխայիդ կարող ես սաստել, նույնիսկ ծեծել, ապա բանակում այլ է՝ այստեղ ճակատագրի հարց կա. աննշան մի բացթողում, առաջին հայացքից սովորական թվացող բառը կարող է զինվորի վրա այլ ներգործություն ունենալ, եւ, խնդրեմ, ճակատագրի խեղումն անխուսափելի է,* - ասում է Տիգրան Փարվանյանը: - Դու պատասխանատվություն ես կրում զինվորիդ համար: Հրամանատարը միայն հրամանատար-զինվոր տեսանկյունից չի դիտարկում զինվորին: Զինվորին պիտի առաջին հերթին դիտարկես որպես մարդ, այդ մարդուն պիտի նայես՝ ինչպես քո որդուն, երկու տարի ոչ մեկը չկա նրա կողքին, դու ես միշտ նրա կողքին, դու ես նրա ծնողը, եղբայրը, ընկերը, հարազատը: Զինվորի ճակատագիրը կախված է հրամանատարից: Սխալվել բոլորը կարող են: Նաեւ՝ զինվորը: Նա ռոբոտ չէ, նա մարդ է՝ ինձ, քեզ, նրա նման՝ երազանքներով, սպասումներով լի: Նա էլ է սիրո կարոտ, նա էլ է բարի, լավ խոսքի սպասում: Մեր զինվորներն առյուծ տղերք են, ես հպարտանում եմ նրանցով: Երբ զինվորները շարվում են, ես նրանց նայում եմ ոչ միայն որպես զինվորների. իմ առջեւ կանգնած է հայոց գենոֆոնդը: Իմ առջեւ կանգնած են հայոց ապագա նախագահը, նախարարը, պատգամավորը, բիզնեսմենը, հայոց բանակի սպան ու հրամանատարը եւ, որ ամենակարեւորն է, իմ առջեւ կանգնած է ապագա հայր-տղամարդը, որ պիտի սերունդ տա եւ շարունակի հայոց գենը: Ուրեմն, սիրով եւ հոգատարությամբ շրջապատենք զինվորին: Նա է այսօր Հայաստան պահողն ու թշնամու զսպաշապիկը:

Զինվորի մասին խոսելիս ոգեւորվել է հրամանատարը, մտել տարերքի մեջ: Նա այն հրամանատարն է, որ բառիս բուն իմաստով իր կյանքը վտանգի ենթարկելով՝ գարնանը սելավների մեջ մնացած զինվորներին որոնողների-փրկողների առաջին շարքում էր եւ քիչ էր մնում ինքն էլ հայտնվեր սելավի անկուշտ երախում:

Այսպիսին է Տիգրան Փարվանյանը: Երբ հարցը վերաբերում է զինվորին, նա վտանգված զինվորի կողքին է: Նա պիտի լսի նրա սրտի խփոցը, զգա նրա շունչը եւ դրանից եզրահանգում անի՝ հետագա քայլերը ճիշտ մշակելու համար: Եվ պատիվ ես համարում, որ Գորիսում տեղակայված բանակային առաջին կորպուսն այսպիսի հրամանատար ունի, հրամանատար, որ պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր զինվորի անվտանգության համար:

Գարեգին Նժդեհն ասում է՝ մայրերի ափերի մեջ պետք է տեսնել հայոց ապագան: Դա այդպես է: Այդպես է նաեւ սա. հրամանատարի ափերի մեջ պետք է տեսնել հայոց բանակի զինվորի ճակատագիրը: Այսինքն, 18-20 տարեկան այս տղաները, որ զինվորական հագուստ են կրում, նրանք են կերտում հայոց ներկան, պաշտպանում հայոց ներկան ու գալիքը:

Բնականաբար, խոսում ենք նաեւ այս տարվա ապրիլյան քառօրյա պատերազմի մասին: Բնականաբար, քանի որ բանակային առաջին կորպուսն էլ հենց առաջին րոպեներից իրեն վստահված դիրքերում էր: Փակագծեր չբացելով՝ ասեմ, որ կորպուսի դերը քառօրյայում բացառիկ էր: Տիգրան Փարվանյանը զոր ու գիշեր, առանց հանգստանալու, առանց շունչ քաշելու, հրամանատարական իր կետում էր: Իսկ հրամանատարական կետը կոնկրետ մի տեղում չէր: Այն մերթ ձորում էր, մերթ՝ բլրի լանջին, մերթ... Դա կախված էր պահից, թշնամու պահվածքից, տեղաշարժից: Տիգրան Փարվանյանը թշնամու շարժերի լեզվի լավ գիտակ է: Յուրաքանչյուր շարժ նպատակ ու թիրախավորում ունի, եւ դու պետք է ոչ միայն կարողանաս դրանք «կարդալ», այլեւ պիտի համապատասխան միջոցներ ձեռնարկես եւ այնպիսի հարված տաս եւ այնպիսի տեղից, որտեղից հակառակորդը չի սպասում:

- Մեր զինվորները, - ասում է հրամանատարը, - ամեն րոպե պատրաստ էին նրանց հոշոտելու, նրանք չէին բավարարվում նրանով, ինչ արել էին: Նրանք անընդհատ խնդրում էին ինձնից՝ հրամանատար, հրաման տուր: Հզոր են մեր տղաները, հզոր է նրանց ոգին: Փառք ու պատիվ նրանց ծնողներին, որ առյուծածին այսպիսի տղաներ են ծնել, իսկ մենք էլ նրանց հզորացրել ենք, ուսուցանել, եւ դա այն աստիճան, որ պահի մեջ անմիջապես կողմնորոշվում են, մարտի բռնվում թվով, զենքով իրենց գերազանցող թշնամու դեմ եւ տանում իսկական հաղթանակ:

Ես երջանիկ հրամանատար եմ, որ ունեմ հերոս զինվորներ ու սպաներ, որ կարողանում են անհնարինը դարձնել հնարավոր, նրանք յուրաքանչյուր պահի պատրաստ են իրենց կյանքը դնել հայրենիքի զոհասեղանին:

Եվ Տիգրան Փարվանյանը գովում-գովում-փառաբանում է կորպուսի զինվորներին ու սպաներին: Եվ չի ասում, որ այդ ամենում իր դերակատարությունն անչափելի է: Չի ասում, որ ինքն է նրանց ոգի տվողը, նրա բանիմացության շնորհիվ է, որ կորպուսը քառօրյա պատերազմում իր առաքելությունը պատվով կատարեց: Եվ կորպուսն ամենավերջում վերադարձավ տուն՝ դարձյալ միշտ պատրաստ թշնամու անակնկալ հարձակումներին, անկանխատեսելի քայլերի ժամանակ կայծակնային արագությամբ հասնելու, շախմատային ճիշտ քայլերի շնորհիվ նրան իր ելման դիրքերը շպրտելու:

31 տարի շարունակ Տիգրան Փարվանյանը զինվորական ծառայության մեջ է: Նրա բարձը երբեմն եղել է քարը, թուփը: Չի հոգնել իր գործից: - Հոգնելս որն է, եթե հոգնեցիր՝ ուրեմն էլ անելիք չունես, սպառվել ես, ուրեմն, չես կարող զորք ղեկավարել, զինվորին հայրություն անել, - ասում է նա:

Ինչո՞ւ հենց զինվորական գործն ընտրեց Տիգրան Փարվանյանը: Հրամանատարը հիշում է. սովորում էր 5-րդ դասարանում: Հեռուստատեսությամբ ցուցադրում էին օլիմպիական խաղերի բացումը: Անմար կրակի մոտ կանգնած խրոխտ կեցվածքով զինվորները գերեցին նրան: «Պապ, որ մեծանամ, զինվորական եմ դառնալու», - ասաց Տիգրան Փարվանյանը հորը: Կցագրման ժամանակ զինկոմիսարիատում ասաց՝ ուզում եմ զինվորական դառնալ:

- Ճի՞շտ ես որոշել, - հարցրին նրան:

- Այո, հաստատ եմ որոշել եւ որոշումս անբեկանելի է:

- Այ տղա, ուրեմն ուզում ես զինվորական դառնալ: Իմացիր, եթե փոշմանես, մեր տան դուռը փակ է քեզ համար, - ասաց հայրը:

Եվ իրական տան դուռը միշտ բաց է Տիգրան Փարվանյանի համար...

- Իմ պաշտամունքն իմ ժողովուրդն է, իմ հայրենիքը, իմ հայրենիքի, իմ տան պաշտպանությունը: Ուր էլ աշխատել եմ, ինձ լավ եմ զգացել, հայրենիքում աշխատելիս ես ինձ ավելի լավ եմ զգում, քանզի ինձ ծնած-սնած ժողովրդի մոտ եմ, իմ արյան մոտ: Իմ ժողովուրդն արժանի է հանգիստ, խաղաղ ապրելուն: Իմ ժողովուրդը լավ գիտի, որ առանց բանակի չկա ժողովուրդ, առանց ժողովրդի չկա բանակ: Եվ դա երեւաց նաեւ քառօրյայի ժամանակ, - մտորում է հրամանատարը:

Զարմանում ես, ինչի մասին էլ զրուցես, Տիգրան Փարվանյանն այն հունով է զրույցը տանում, որի էպիկենտրոնում դարձյալ հայտնվում է զինվորը, հայոց տան զինվորը: Ինչքան շատ է սիրում եւ գնահատում նա զինվորին:

- Ձեր տղաները ձեզանից ի՞նչ են սովորել, ի՞նչ են ընդօրինակել, - հարցնում եմ հրամանատարին:

- Ծնվել եմ սեպտեմբերի 21-ին՝ հայոց անկախության օրը, Դավիթ տղաս նույնպես սեպտեմբերի 21-ին է ծնվել, իսկ Մհեր տղաս՝ հայոց բանակի ծննդյան օրը՝ հունվարի 28-ին: «Սասնա ծռեր» էպոսը շատ եմ կարդացել, գերվել նրա հերոսներով: Դրա համար էլ տղաներիս Դավիթ ու Մհեր եմ կոչել: Իմ տղաների համար ես էտալոն եմ, ամեն լավի, բարու, ուժի խորհրդանիշ: Դրա համար էլ նրանք սպունգի նման ինձնից ինչ հնարավոր է՝ քաշել են: Մեր տանը զրույցների ժամանակ միշտ խոսել ենք հայոց հողերի վերադարձման մասին: Մի օր էլ Դավիթս թե՝ երբ մեծանամ, վարորդ եմ դառնալու: Ինչու հարցին այսպես պատասխանեց՝ որ թուրքի ձեռքից մեր հողերը բարձեմ-բերեմ:

Եվ այսօր թուրքի դեմ կանգնել է նրանց հայրը՝ գեներալ-մայոր, բանակային առաջին կորպուսի հրամանատար Տիգրան Փարվանյանը, կանգնած է աներեր, կանգնած է այն համոզմամբ, որ իր տղերքը՝ կորպուսի զինվորներն ու սպաները, առյուծներ են, եւ առյուծները միշտ պատրաստ են ցատկի:

Գարեգին Նժդեհն ասել է՝ թույլերն են խաղաղություն ուզում: Նաեւ ասել՝ խաղաղությունը ժամանակավոր զինադադար է: Հաջորդ կռվում հաղթում է նա, ով խաղաղությունը լավ է օգտագործել: Եվ Տիգրան Փարվանյանի առյուծներն անընդհատ կատարելագործվում են, իրենց մարտական պատրաստվածությունը նորանոր աստիճանի հասցնում, քանզի քնած չէ թշնամին... ■

# Տոնական միջոցառումներ Մեղրու պետական քոլեջում



**Արդեն 15-ամյա Մեղրու պետական քոլեջում տոնական տրամադրություն էր, որտեղ հոբելյանական արարողությանը բավականին լրջորեն էին նախապատրաստվել: Միջոցառումն սկսվեց գիտակրթական համաժողովով, որը նախաձեռնել էր ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը: Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարությունների ներկայացուցիչներ, հանրապետության մի շարք բուհերի, քոլեջների, հիմնադրամների ղեկավարներ:**

Հոբելյանական հանդիսության ողջույնի խոսքը հնչեցրեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարի խորհրդական Արտակ Աղբալյանը: Քննարկվող «Մասնագիտական կրթությունը եւ ուսուցումը հեռավոր ու սահմանամերձ (սահմանապահ) բնակավայրերի հզորացման նախապայման» թեմայի շուրջ ծավալվեց մտքերի ակտիվ փոխանակություն: Պետական ռազմավարական ծրագրերի, դրանց հնարավորությունների ու հիմնախնդիրների մասին զեկույցներով հանդես եկան Է.Պետրոսյանը (ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն), Ա.Պապյանը (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարություն), Ա.Բակունցը (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն), Լ.Գեւորգյանը (ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատ), Լ.Պետրոսյանը (Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ), Լ.Բեգլարյանը (Գլոբալ զարգացումների հիմնադրամ) եւ ուրիշներ:

Ներկաները համակ ուշադրությամբ լսեցին ՀՀ Սյունիքի մարզի՝ վերջերս խոշորացված համայնքի նորընտիր ղեկավար Մխիթար Զաքարյանի բովանդակալից ելույթը «Համայնքների խոշորացման առավելություններն ու հիմնախնդիրները, կադրային կարիքները» թեմայի շուրջ:

Համաժողովում զեկույցներ հնչեցին նաեւ գործատուների, գործարարների եւ արդյունաբերողների բիզնես զարգացման միտումների ու կադրային կարիքների մասին, որի շուրջ մտքերի փոխանակությամբ հանդես եկան «Մեղրու գինու գործարան» ԲԲԸ-ի տնօրեն Դ.Ալեքսանյանը, Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Մ.Հակոբյանը եւ ուրիշներ:

Գիտակրթական կոնֆերանսի ավարտին պետական քոլեջ, ՏԻՄ եւ բիզնես համագործակցության հնարավոր ծրագրերի շուրջ կազմակերպվեցին թեմատիկ քննարկումներ:

Միջոցառման հաջորդ օրը՝ հոկտեմբերի 1-ին, քոլեջի դահլիճում հանդիսավորությամբ նշվեց կրթօջախի 15-ամյա հոբելյանը: Տեսանյութով ներկայացվեց քոլեջի անցած ուղին, տարեգրության կերտման գործում ներդրում ունեցողներին: Շնորհավորանքի խոսքով հանդես եկավ քոլեջի առաջին տնօրեն Ժորա Միրզոյանը: Կրթօջախի տարեդարձի առթիվ Մեղրի համայնքի ղեկավար Մ.Զաքարյանի շնորհավորագիրը քոլեջի տնօրեն Թ.Հովհաննեսյանին հանձնեց համայնքապետարանի ներկայացուցիչ Վանիկ Սարգսյանը:

15-ամյա քոլեջին շնորհավորական ուղերձներ էին հղել ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լ.Մկրտչյանը, քոլեջի հիմնադիր ու լավ բարեկամ Ռ.Փոլադյանը:

Վերջում կոլեկտիվի մի շարք դասախոսների ՀՀ կրթության եւ գիտության նախարարի պատվոգրերն ու շնորհակալագրերը հանձնեց նախարարի խորհրդական Ա.Աղբալյանը:

**ՍԻՐՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղն ամփոփեց 2015-16 ուսփարին

**Սեպտեմբերի 28-ին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղում տեղի ունեցած գիտական խորհրդի նիստում քննարկվեցին 2015-16 ուստարվա կատարված աշխատանքները:**

Նիստը նախագահում էր Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտորի տեղակալ, ուսանողական խորհրդի նախագահ Գոռ Վարդանյանը:

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանը ներկայացրեց ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի կարգավիճակում ընդունված զարգացման 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի 4-րդ տարվա կատարողականը՝ ներառելով մասնաճյուղի 2015-16 ուստարվա գործունեության, 2015թ. օրացուցային տարվա եւ 2016թ. հունվարի 1-ից մինչեւ սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության ամփոփումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են մասնաճյուղի ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացմանը միտված աշխատանքները՝ դիմորդների հոսքի եւ ուսանողական համակազմի կայունացման, կրթության որակական աճի, կառավարման օպտիմալացման, կայուն ֆինանսական համակարգի ձեւավորման, նյութատեխնիկական բազայի արդիականացման եւ պատշաճ ինֆրակառուցվածքի ստեղծման, տեղեկատվական համալիր ապահովվածության, գիտական ներուժի եւ արտաքին կապերի զարգացման ուղղություններով:

Լ.Պետրոսյանը մանրամասն ներկայացրեց մասնաճյուղի նպատակներն ու խնդիրները, այն է՝ ապահովել մասնաճյուղի մուտքի բազմազանեցում եւ համապատասխանություն արտաքին միջավայրի պահանջներին, բավարար մակարդակի հասցնել ուսանողական համակազմը, ապահովել կրթական ծրագրերին եւ պետական միասնական չափանիշների պահանջներին համապատասխանող որակյալ կրթություն, արդի կրթական պահանջներին բավարարող դասախոսական կազմ, կառավարման օպտիմալ եւ արդյունավետ համակարգ, ձեւավորել կրթական եւ հետազոտական ծրագրերին համապատասխանող նյութատեխնիկական բազա, ապահովել սոցիալական ծրագրերի շարունակական զարգացում եւ ինֆրակառուցվածքի պատշաճ մակարդակ, ֆինանսական կայունություն եւ ձեւավորել օպտիմալ ֆինանսական համակարգ եւ այլն:

Ամփոփելով 2015-16 ուստարում ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի գործունեության հիմնական արդյունքները եւ գնահատելով դրանք մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի խնդիրների կատարման տեսանկյունից՝ կարելի է արձանագրել, որ շարունակվել են ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացմանը միտված աշխատանքները, մասնավորապես՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի պահանջները եւ պոտենցիալ դիմորդների մասնագիտական կողմնորոշվածությունն ու կրթական կարիքները՝ վերանայվել է մասնաճյուղի ընդունելության պլանավորումը եւ պատշաճ կերպով կազմակերպվել ընդունելության գովազդարշավը, շարունակվել են լրացուցիչ կրթության կազմակերպման գործընթացը, կրթության որակի ապահովման, ուսումնական գործընթացի եւ դասախոսական կազմի բարելավման ուղղություններով տարվող աշխատանքները եւ այլն:

> *Խոսվեց նաեւ որոշ թերացումների եւ բացթողումների մասին, որոնց շտկման եւ դեռեւս չիրականացված խնդիրների լուծման ուղղությամբ կձեռնարկվեն կոնկրետ միջոցառումներ:*

Լ.Պետրոսյանը ներկայացրեց նաեւ որոշ առաջարկություններ, այն է՝ շարունակել դիմորդների հոսքի կայունացման ուղղությամբ տարվող աշխատանքները, զարգացնել լրացուցիչ կրթության համակարգը՝ մասնաճյուղը լիարժեք ներգրավելով հանրային կարիքների բավարարմանն ուղղված տարածաշրջանային ծրագրերում, շարունակաբար բարելավել կրթության որակը եւ շրջանավարտների գործնական պատրաստվածության մակարդակը, հետեւողական աշխատանքներ իրականացնել մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների շարունակական աճման ուղղությամբ, ընդլայնել զարգացման ծրագրերում մասնաճյուղի շրջանավարտների, գործընկեր կազմակերպությունների (առանձնապես՝ հանքարդյունաբերական ձեռնարկությունների) եւ հանրության հետ համագործակցությունը, լուրջ ուշադրություն դարձնել գնումների գործընթացի կազմակերպանը՝ այն օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու համար եւ այլն:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը խոսեց դպրոց եւ մասնաճյուղ կապի ամրապնդման, ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի գիտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, տեխնիկական գիտությունների դոկտոր, դոցենտ Սեյրան Բալասանյանը՝ որոշ թերացումների եւ դրանց վերացման շուրջ առաջարկությունների, Բնական գիտությունների եւ տեղեկատվական համակարգերի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Այվազյանը՝ ֆակուլտետի կատարած աշխատանքների, հետագա անելիքների եւ որոշ խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունների, «Ճյուղային տնտեսագիտություն եւ կառավարում» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լիլիթ Եղիազարյանը՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված աշխատանքների, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ արտադրության գծով տնօրեն Դավիթ Աղամյանը՝ մասնաճյուղի շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ:

Բանախոսներին իր հարցերն ու առաջարկությունները ներկայացրեց նիստի նախագահող Գոռ Վարդանյանը: Մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշեց, որ հաշվետվությունը հավաստիորեն արտացոլում է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի 2015-16 ուստարվա գործունեությունը, առկա վիճակն ու զարգացման ուղիները եւ երաշխավորեց սահմանված կարգով այն ներկայացնել ՀԱՊՀ գիտական խորհրդի քննարկմանը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Կոչմանը հավատարիմ



Հաճելի առիթով են հնչելու ակնածանքի, մեծարանքի, խոնարհման խոսքերը, հնչելու են սիրով, երախտագիտությամբ եւ ուղղվելու են մարդասիրական մասնագիտություններից մեկը կյանքի ուղի ընտրած մտավորականի՝ Սիսիանի N2 հիմնական դպրոցի տնօրեն Հրանտ Ազարումյանի հասցեին:

19 տարի առաջ էր, երբ Սիսիանի N2 դպրոց մտավ եւ տնօրենի ոչ դյուրին, բայց պատասխանատու գործին լծվեց Հրանտ Ազարումյանը եւ հենց առաջին իսկ օրվանից անթիվ-անհամար թելերով կապվեց դպրոցին, ձեռնամուխ եղավ կյանքի կոչել բազում ծրագրեր, դառնալ նոր, դպրոցանպաստ նախաձեռնությունների հեղինակ:

Իր ողջ մանկավարժական գործունեության ընթացքում քայլել է հաստատակամորեն՝ ունենալով ուրույն ձեռագիր, անսասան կամք, ազնվություն, ճշտակատարություն՝ այս ամենը դարձնելով գործելաոճ, դարձնելով կենսակերպ:

Նրան ճանաչողները չեն դադարում զարմանալ Հրանտ Ազարումյանի՝ սիրած գործի նկատմամբ ունեցած նվիրվածությամբ, օգնել-աջակցելու պատրաստակամությամբ, կրթօջախ ղեկավարելու վարպետությամբ…

Այո՛, հաճելի է բարձրաձայնել, որ Հրանտ Ազարումյանի ղեկավարման տարիներին դպրոցն ամրագրել է բազմաթիվ հաջողություններ: Ուրախությամբ կարելի է արձանագրել, որ այսօր էլ շարունակվում է հաջողությունների «շքերթը», շարունակվում է ձեռքբերումների շղթան համալրվել նորանոր օղակներով:

Ի վերջո, ո՞րն է Հ.Ազարումյանի ղեկավարած դպրոցի հաջողության գրավականը: Հաստատապես կարելի է ասել՝ նորի, առաջադիմականի, արդիականի՝ կրթօջախում ներդնելն ու կյանքի կոչելը:

*– Քանի կաս, ապրում ես, պետք է կարողանաս մի քար ավելացնել դպրոցաշինության վեր խոյացող շենքի ճակատին:*

*Մարդը ծերանում է, երբ նրա ստեղծագործական ոգին, սերն աշխատանքի նկատմամբ մարում է:*

*Դպրոցում անցկացրած յուրաքանչյուր օր նվեր է ինձ համար, քանի որ երեխաներից պարզապես սովորում եմ*, - սիրում է կրկնել, հորդորել, ուսուցանել Հ. Ազարումյանը:

Ջուր չէ, որ նա իր սաների հետ է կապում վաղվա օրվա նկատմամբ հավատը, հույսը, ակնկալությունները՝ ի նպաստ դպրոց-դպրատան ապագայի…

Նրանք, ովքեր գեթ մեկ անգամ առիթ են ունեցել շփվելու հարգարժան տնօրենի հետ, անշուշտ, հաճելիորեն կզարմանան, ապա կվարակվեն նրա մարդ որակով, լավատեսությամբ, հուսավառությամբ…

Կրթության բնագավառում ներդրած ավանդի համար բազմաթիվ խրախուսանքների է արժանացել սիրված տնօրենը, բայց ամենակարեւոր խրախույսը, թերեւս, սաների, գործընկերների անկաշառ սերն ու հարգանքն է:

Մեր հարգարժան տնօրենի մասին կարելի է անվերջ գրել՝ մեկ անգամ եւս շեշտելով նրա բարությունը, արդարամտությունը, սրտացավությունը՝ հաստատելով այն պարզ ճշմարտությունը, որ հնչեցված խոսքերը լոկ բառաբույլ չեն, եւ որ դրանց տակ սիրով կստորագրեին ե՛ւ աշակերտները, ե՛ւ ծնողները, ե՛ւ մանկավարժները…

Հարգարժա՛ն Հրանտ Արզումանյան, ընդունեք մեր անկեղծ, սրտաբուխ բարեմաղթանքները՝ լուսավոր տոնի՝ Ուսուցչի օրվա առիթով, եւ թող դրանք լինեն մեր սիրո, հարգանքի առհավատչյան:

Մաղթում ենք Ձեզ տոկունություն, արեւշատություն, բեղմնավոր գործունեություն՝ ի նպաստ այն վեհ գործի, որին անվերապահորեն հավատարիմ եք, որին ի վերուստ կոչված եք…

**Սիսիանի N2 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ**

# Մարդը ապրում է... պատմության մեջ




**ՎԱՐԴԳԵՍ ԽԱՆՈՅԱՆ**
ք. Ջերմուկ

Լեռները հպարտ գեղեցկությամբ փարվել են երկնքին՝ իրենց գրկում փայփայելով հինավուրց այս շենը, անունը՝ Շվանիձոր: Ինչպես Սյունյաց լեռնաշխարհի մյուս շեներում, այնպես էլ այստեղ ապրում են իրենց լեռների պես հպարտ, հայրենի եզերքին սիրահարված մարդիկ, ովքեր կյանքի բոլոր ոլորտներում՝ դաշտ ու այգի, մշակութային օջախ ու մաշտոցյան դպրատուն, անձնվեր աշխատանքով բերք ու բարիք են արարում, հայրենանվեր սերունդ կրթում ու դաստիարակում: Նրանցից մեկն է նվիրյալ մանկավարժ Կամո Հայրապետյանը:

Վաղուց ենք ծանոթ, բազմիցս հանդիպել ենք Կապանում, Ագարակում կամ Ջերմուկում, զրուցել տարբեր թեմաներով, ու միշտ ինձ հիացրել է նրա խանդավառ սերը հայրենի եզերքի հանդեպ: Ինչպիսի՜ հպարտությամբ է նա պատմում իր հարազատ բնակավայրի, նրա մարդկանց, իր շնորհաշատ սաների մասին: Հետո «թերթում է» Շվանիձորի պատմության էջերը. գյուղի սրբավայր հոգեւոր տունն է «առաջնորդում»՝ 17-րդ դարի ծնունդ Ս.Աստվածածին եկեղեցին, նույն դարում կառուցված հռչակավոր ջրանցույց եզակի կամուրջը, որի «վրայով», այո, հենց վրայով ջուրը հոսում է դեպի այգիները՝ արարելու Սյունյաց աշխարհով մեկ փառաբանված քաղցրահամ խաղող, նուռ, թուզ, արքայանարինջ, ուրիշ բարիքներ: Հետո գյուղի պատմության առավել փառավոր դրվագներ է հիշում. իրենց դպրոցը 19-րդ դարի 80-ական թվականներին հիմնադրել էականավոր վիպասան Րաֆֆին, 1918-21 թվականներին Շվանիձորում ինքնապաշտպանական մարտեր է մղել Գարեգին Նժդեհը: Գյուղի ամենատարեց բնակիչը՝ 100-ի սահմանն անցած Հարություն Օհանյանն է այդ մասին պատմել: Հետո Կամո Հայրապետյանը հպարտությամբ ու ցավով գյուղի հնօրյա պատմության ուրիշ էջեր է թերթում. իրենց փոքր գյուղից Հայրենական մեծ պատերազմին ավելի քան 200 հոգի է մասնակցել, որոնցից 93-ը հերոսաբար զոհվել են մարտերում: Գյուղն ակտիվ մասնակցություն է ունեցել նաեւ Արցախյան հերոսամարտին, եւ այսօր էլ Շվանիձորի երիտասարդ զավակներից մի քանիսն այնտեղ էր՝ սահմանի ամենաթեժ կետերում:

Այս եւ ուրիշ այլ նշանավոր փաստեր ներկայացնելով՝ Կամո Հայրապետյանը պատկերավոր ավելացնում է.

- Մի խոսքով, մեր Շվանիձորը պատմական մեծ անցյալ ունի, եւ մենք ապրում ենք պատմության մեջ. «պատմություն» բառն էլ խորհրդանշական է նրա համար: Չէ՞ որ ինքը հենց պատմության ուսուցիչ է, ավելի քան 30 տարի անսահման նվիրումով աշխատել է տարբեր դպրոցներում՝ ծննդավայր Շվանիձորից մինչեւ Ագարակ՝ վերջինիս միջնակարգ դպրոցն ու Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո: Ագարակի N2 դպրոցում 90-ական թվականների սկզբին պատմության ուսուցիչ է եղել, ապա՝ տնօրեն, իսկ 1995-ից մինչեւ օրս նույն կրթարանում կրկին ուսուցիչ է, համատեղությամբ պատմություն ու հասարակագիտություն է ավանդում նաեւ Մեղրու սահմանապահ ջոկատին կից գործող դպրոցում: Նվիրյալ մանկավարժն իր գործունեության ընթացքում արժանացել է պատվոգրերի ու շնորհակալագրերի: Կինը՝ Գայանեն, նույնպես դպրոցում է աշխատում, ռուսաց լեզվի ուսուցչուհի է:

– Ուզում եմ գրել քո մասին, – վերջերս նորից հանդիպելով՝ ասացի նրան:

– Ի՞մ մասին, – բարեկամս անակնկալի եկավ, ապա շարունակեց, – եթե գրում եք, իմ Շվանիձորի ու նրա աշխատասեր մարդկանց մասին գրեք, մեր եռանդուն գյուղապետ Հովհաննես Օհանյանի, ավանդույթներով հարուստ մեր դպրոցի, նրա տնօրեն Անահիտ Զաքարյանի, իմ գործընկեր նվիրյալ մանկավարժների մասին գրեք, - հետո մի պահ լռեց ու համեստորեն ասաց, - իսկ ես ի՞նչ, ես պարզապես նրանցից մեկն եմ եւ ամեն ինչի համար պարտական եմ ծնողներիս՝ ամբողջ կյանքը վարորդ աշխատած հորս, ում մահն անսահման վիշտ պատճառեց ինձ, եւ աստվածային մորս, ում բարի օրհնությամբ շարունակվում է իմ կյանքի բարի ճանապարհը…

Բաժանվեցինք՝ նորից հանդիպելու խոստումով: Նա գնաց հայրենի Սյունիք, որպեսզի վաղը նորից մտնի դպրոց՝ շարունակելու իր կյանքի նվիրական առաքելությունը՝ կրթի ու դաստիարակի մատաղ սերնդին: ■

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**



## Աշոտ Գրիգորյան

Ծնվել է 1934թ. հուլիսի 30-ին Գորիսի շրջանի Խոտ գյուղում: Հայրը՝ Արշակ Վարդազարյանը, եղել է հայտնի այգեգործ, մասնակցել Առաջին համաշխարհային պատերազմին:

Բազմազավակ մայրը՝ Սապետ Վարդազարյանը, հայտնի է եղել իր բարությամբ եւ մարդասիրությամբ: Ա.Գրիգորյանն ունեցել է երկու եղբայր եւ երկու քույր: Եղբայրները մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին: Պետրոս Գրիգորյանը զոհվել է Կերչում, իսկ Անդրանիկը վերադարձել է վիրավոր: Նա զբաղեցրել է ղեկավար եւ պատասխանատու պաշտոններ:

Ա.Գրիգորյանը, ավարտելով դպրոցը, 1950-ին ընդունվել է Գորիսի մանկավարժական ուսումնարան: 1954-ին, ավարտելով ուսումնարանը, աշխատանքի է անցել Շինուհայրի ՄՏԿ-ում՝ գրադարանի վարիչ: 1954 թվականից մինչեւ 1957թ. ծառայել է խորհրդային բանակում: 1958թ. մինչեւ 1962թ. աշխատել է Խոտ գյուղի ութամյա դպրոցում՝ ուսուցիչ: 1959թ. ընդունվել է կոմկուսի շարքերը: 1962թ. տեղափոխվել է Գորիս եւ մինչեւ 1967թ. աշխատել Գորիսի N23 գիշերօթիկ դպրոցում՝ դաստիարակ: 1963 թվականից մինչեւ 1969 թվականը սովորել է Երեւանի հայկական պետական մանկավարժական ինստիտուտում (հեռակա ուսուցմամբ) եւ ստացել պատմության ուսուցչի որակավորում: 1967 թվականից մինչեւ 1970 թվականն աշխատել է Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցում՝ ուսուցիչ:

1970-1971թթ. աշխատել է Գորիսի N3 միջնակարգ դպրոցում՝ զինղեկ եւ պատմության ուսուցիչ: 1971-1988թթ. աշխատել է ՀԿԿ Գորիսի շրջկոմում՝ զբաղեցնելով պատասխանատու պաշտոններ:

1988-1991թթ. աշխատել է Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ: 1992-1998թթ. աշխատել է Գորիսի զբաղվածության կենտրոնի տնօրեն:

1973թ. ընդունվել եւ 1975-ին ավարտել է Բաքվի կուսակցական բարձրագույն դպրոցը:

1999-2005թթ. աշխատել է ՊՄՊ Սյունիքի մարզային ծառայությունում՝ ծառայության պետի տեղակալ Գորիսի տարածաշրջանում:

2006թ. ընտրվել է Գորիսի վետերանների խորհրդի նախագահ եւ այն ղեկավարել մինչեւ 2016թ. սեպտեմբերի 11-ը:

Բազմիցս ընտրվել է Գորիսի շրջանային եւ քաղաքային խորհուրդների պատգամավոր:

Աշխատանքային գործունեության ընթացքում պարգեւատրվել է «Աշխատանքային գերազանցության», «Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 60, 65, 70-ամյակներին» նվիրված, «Հունան Ավետիսյան» մեդալներով:

Պարգեւատրվել է բազմաթիվ պատվոգրերով, շնորհակալագրերով եւ գովասանագրերով:

Ա.Գրիգորյանը 1962թ. նոյեմբերին ամուսնացել է Էլմիրա Գրիգորյանի հետ: Կինը նույնպես եղել է մանկավարժ: Ունեցել են երկու որդի եւ մեկ դուստր:

Ա.Գրիգորյանը ողջ կյանքի ընթացքում իրեն դրսեւորել է որպես սկզբունքային, ազնիվ, օրինապաշտ, պետական մտածողությամբ եւ իր ազգին անմնացորդ նվիրվածությամբ օժտված պետական, հասարակական եւ քաղաքական գործիչ:

Մահացել է 2016թ. սեպտեմբերի 11-ին:

**Մի խումբ ընկերներ**

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**



## Կյանքից հեռացավ անվանի բժշկուհի Լենա Ղազարյանը

Մարդկային մի տեսակ, որոնց ձեռքերում ոչ թե գավազան է, այլ ափերի մեջ մարդկային կյանքեր փրկելու բանալի, անհատականություն, ով աշխարհին նայում էր բարությամբ, ձեռք մեկնելու պատրաստակամությամբ, ում սիրտը միշտ ցավացել է անզոր ու խեղճ մարդկանց համար, փորձել օգնել, օգնել ինչով կարող է, եթե ոչ որպես բժիշկ, ապա որպես մարդ: Ճանապարհին հանդիպող զինվորի նկատմամբ էլ անտարբեր չէր, կանչում էր, օրհնում, շնորհակալ լինում նրան՝ որպես հայրենապաշտպանի, գոնե մի կտոր հաց տալիս: Այս շարքը կարելի է անընդհատ թվարկել, որովհետեւ Լենա Ղազարյանն ուրիշ պատգամով էր ապրում. «Ես երջանիկ եմ, եթե բոլորն են երջանիկ»: Լենա Ղազարյանը՝ իր գործին անմնացորդ նվիրված բժշկուհին, հիանալի մայրը, աշխարհի ամենաբարի տատիկը, կյանքին մնաս բարով ասաց: Սեպտեմբերի մեկին՝ գիտելիքի օրը, մահը հանգցրեց շատ բան արած մարդու կյանքի լուսավոր էջը՝ բոլորի սրտում ու հիշողության հոլովման մեջ թողնելով բարի անուն:

Լենա Վաղարշակի Ղազարյանը ծնվել է 1935թ. Բռնակոթ գյուղում: Սովորել է տեղի դպրոցում, որից հետո գերազանցությամբ ավարտել է Երեւանի բժշկական ինստիտուտը եւ 1962թ. գործուղվել Բազարչայ, որտեղ էլ ամուսնացել է ժամանակի մեծանուն անհատականության՝ Վազգեն Ներսիսյանի հետ: Նրանք մարդկային իրենց յուրահատուկ տեսակով խիստ նման էին միմյանց եւ այդ ներդաշնակ ամուսնությունից ծնվեցին արժանի ժառանգորդներ՝ Նաիրա եւ Ապետնակ Ներսիսյանները, ովքեր պիտի շարունակեին ծնողների պատգամները: Այնուհետեւ բժշկուհի Լենան 1967թ. աշխատել է Սիսիանի հիվանդանոցում ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ, գինեկոլոգ, մանկական կոնսուլտացիայի վարիչ եւ առողջապահական այլ ոլորտներում, հետագայում՝ 1993 թվականից՝ Սիսական գնդում՝ որպես ռազմական բժիշկ: Երբ բժշկուհին անցել էր վաստակած հանգստի, դեռ օգնելու ուժ ունենալով՝ աշխատեց «Առաքելություն Հայաստան» կազմակերպությունում՝ բժշկելով իրենց կյանքի աշունն ապրող տարեց մարդկանց:

Աստված Ձեզ բարով ընդունի երկնային թագավորություն, թո՛ղ Ձեր բարի գործերի պտուղները վայելեն Ձեր ժառանգները:

**Սիսիանի ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Արծվանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրա (22 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ձեւ 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /ձեւ 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2016թ. նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ տոն օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. նոյեմբերի 4-ին ժամը 15-00-ին Արծվանիկի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-90-80-44, 0285-6-03-04:

---

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շիկահողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսերեն (11,75 ժամ), ֆիզկուլտուրա (9,5 ժամ) եւ գերմաներեն (9 ժամ) առարկայի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 13-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա Սյունիքի մարզի Շիկահողի միջնակարգ դպրոցում, 2016թ. հոկտեմբերի 18-ին: Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 172 111 հեռախոսահամարով:

**syuniacyerkir.am**
**15 սեպտեմբերի 2016թ.**

---

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Վարդավանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու եւ անգլերեն առարկաների թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա Սյունիքի մարզի Վարդավանքի միջնակարգ դպրոցում, 2016թ. նոյեմբերի 4-ին: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 6-04-70 հեռախոսահամարով:

---

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ նախատեսվում է մարզում ստեղծել տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) եւ ծրագրավորման ուսումնական կենտրոն: Կենտրոնի ստեղծման նպատակն է մարզի երիտասարդներին հնարավորություն տալ մասնագիտանալ տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում, ծանոթանալ ծրագրավորման հիմունքներին, ինչպես նաեւ մարզում ստեղծել նոր աշխատատեղեր:

Կենտրոնում նախատեսվում է անցկացնել հետեւյալ դասընթացները.

1. համակարգչային գրագիտություն
2. մուլտիմեդիա
3. վեբ կայքերի նախագծում
4. ծրագրավորում

Նախաձեռնությանը կարող են մասնակցել ինֆորմատիկայի բնագավառում բարձրագույն կրթություն ստացած անձինք, տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի մասնագետներ, ովքեր ցանկանում են աշխատել կենտրոնում ու պատրաստել նոր կադրեր:

Նորաստեղծ կենտրոնի վերաբերյալ մանրամասն տեղեկություն ստանալու համար կարող եք դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժին կամ զանգահարել (0285) 5-21-30, 094346834 հեռախոսահամարներին կամ գրել syunik.tsragrer@mta.gov.am էլ. հասցեին:

---

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** Ես՝ Ադելա Ոսկանյանս, լինելով Կապան քաղաքի բնակչուհի, ապրելով հենց իմ քաղաքում, մեծ հպարտությամբ եմ լցված մեր իշխանության կատարած աշխատանքների նկատմամբ, հատկապես մեր մարզպետ Սուրիկ Խաչատրյանի եւ մարզպետարանի կրթության վարչության պետ Ալեքսանյանի մարդասիրական եւ հոգատար վերաբերմունքով:

Բացարձակ անհույս վիճակից ելնելով՝ դիմեցի կրթության վարչության պետին եւ մարզպետին, ստացա այսպես ասած հույսի լույսը, իմ թոռնիկին՝ կարմիր դիպլոմով, ջանքեր չխնայելով տեղավորեցին աշխատանքի:

Հավատացած եմ, որ այս ամենը կատարվում է յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ:

Հաստատ համոզված եմ, որ բոլորս ուզում ենք ապրել միայն այդպիսի մարզում եւ այսպիսի մարդկանց շրջապատում:

Անչափ շնորհակալ եմ:

**ԱԴԵԼԱ ՈՍԿԱՆՅԱՆ**

---

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

Առանձնատուն Նժդեհի 1-ին նրբ. տուն 62 հասցեում: Գինը՝ պայմանագրային: Տեղեկությունների համար զանգահարել 094 33 90 70 հեռախոսահամարով (Դավթյան Արտուշ):

---

**ԿՈՐԵԼ Է**

Երեւանի մենեջմենտի համալսարանի 2011-12թթ. ուստարվա շրջանավարտ Ավետիս Թաթուլի Անդրեասյանի AB 152541 դիպլոմը: Համարել անվավեր:

---

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է: Զանգահարել՝ (094) 95 55 35:

---

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ծավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրա (12.25), մաթեմատիկա (6.75), հայոց լեզու (24.75), անգլերեն (10.5), պատմություն (17.5), ֆիզիկա (7.25) առարկայի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա Սյունիքի մարզի Ծավի միջնակարգ դպրոցում, 2016թ. նոյեմբերի 4-ին: Տեղեկությունների համար զանգահարել՝ 094 013020 հեռախոսահամարով:

---

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկա /10 ժամ/ առարկայի ցուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 14)
2. Բարձրագույն կրթության մանկավարժական որակավորման աստիճանը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաեւ զինգրքույկ,

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2016 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15: 00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2016 թվականի նոյեմբերի 4-ին ժամը 14: 00-ին Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցում՝ Կավարտ թաղամաս:

Տեղեկությունների համար զանգահարել 2-46-37 հեռախոսահամարներով:

---

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ), ֆիզկուլտուրա (22,5 դասաժամ) առարկայի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա Սյունիքի մարզի Սյունիքի միջնակարգ դպրոցում, 2016թ. հոկտեմբերի 11-ին: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 06 48 13, (094) 06 47 81 հեռախոսահամարներով:

**syuniacyerkir.am**
**13 սեպտեմբերի 2016թ.**



# Վերաօծվեց Սեւաքարի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

**2013թ. մարտի 9-ին Կապանի տարածաշրջանի Սեւաքար գյուղի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին փլուզվեց, եւ անմիջապես գյուղապետ Արշավիր Հակոբյանը, տարբեր լրատվամիջոցներով հայտարարություններ տալով, փորձեց բարերարներ գտնել:**

Երկար որոնումներից հետո գտնվեց այդ բարերարը, ով որոշեց հովանավորել եկեղեցու վերականգնումը՝ պայմանով, որ իր անունը մինչեւ եկեղեցու վերաօծումը գաղտնի մնա: Բարեգործության խթաններից մեկն էլ եկեղեցու անունն էր (բարերարի դստեր անունը Հռիփսիմե է): Հիմա, երբ արդեն եկեղեցին վերականգնվել է, սեւաքարցիներին հայտնի է բարերարի անունը՝ Լեւոն Նահապետյան, ով, դժբախտաբար, ավտովթարից մահացել է: Եկեղեցու վերականգնման համար ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նաեւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն:

Փլուզումից երեք տարի անց՝ 2016թ. սեպտեմբերի 27-ին, Սուրբ Հռիփսիմե եկեղեցում տեղի ունեցավ երկար սպասված վերաօծման արարողություն, որ կատարեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ, գերաշնորհ տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը՝ մասնակցությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ տեր Մակար վարդապետ Հակոբյանի:

Եկեղեցու վերաօծման արարողությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վահե Հակոբյանը, բարերար Լեւոն Նահապետյանի կինը՝ Կարինե Նահապետյանը, նրանց զավակները, մարզային եւ քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, բազում սեւաքարցիներ:

*«Սա է տունն աստվածային, հրեշտակաց բնակարան, մարդկանց քավարան, սրբոց ժողովարան: Հոգեկան անհուն ուրախությամբ եւ քրիստոնեական ջերմագին խնդությամբ է լցված բոլորիս հոգիները եւ օգտագործելով այս բարեպատեհ առիթը՝ շնորհավորում ենք ամեն մեկիդ հավաքաբար եւ մասնավորաբար այս գեղեցիկ արարողության կապակցությամբ: Մեր հոգու պարտքն ենք համարում աղոթք առաքել առ Բարձրյալ բարեգործ Լեւոն Նահապետյանի հոգու հանգստության համար, որ ոչ թե մահացավ, այլ մեզ համար իբրեւ բարեխոս ավելացավ երկնքում: Թող Սուրբ աջը հովանի եւ պահապան լինի մեր բարերարներին, Հայաստան աշխարհին եւ մեր սիրելի ժողովրդին, Սուրբ Հռիփսիմեի բարեխոսությունն անպակաս լինի բոլորից: Ինչպես Խրիմյան Հայրիկն է ասել, բանուկ պահեք եկեղեցու ճանապարհը»,* – իր խոսքում ասաց գերաշնորհ տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը, ինչպես նաեւ ներկայացրեց Վարագա Սուրբ խաչի տոնի նախապատմությունը, որ այս տարի Հայ առաքելական եկեղեցին նշել է սեպտեմբերի 25-ին:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ տեր Մակար վարդապետ Մակարյանն իր խոսքում նշեց, որ Սյունիքը եղել է ոչ միայն պետականության պահապանն ու կրողը, այլեւ հոգու տաճար, աստվածաբանության հոգեւոր դարբնոց: *«Տարիներ առաջ սատանայի կամոք քանդվեց այս եկեղեցին, որովհետեւ այս եկեղեցու կամարներից ներս տեւական ժամանակ սուրբ ու անմահ պատարագ չէր մատուցվում, աղոթք չէր հնչում: Եկեղեցու վերականգնման սուրբ գործը ստանձնեցին բարի եւ ճշմարիտ հավատացյալ Լեւոն Նահապետյանը, իսկ աշխատանքներն ավարտին հասցրին մեր երկրի տնտեսության զարգացման հիմքերից մեկի՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ֆինանսավորմամբ: Շնորհակալություն եւ բյուր օրհնություն բոլոր բարերարներին. մեր աղոթքներում նրանց համար Աստծուց խնդրենք առողջություն, երջանկություն եւ, որ ամենակարեւորն է, երկնային արքայություն»:*

Ինչպես տեղեկացրեց վերականգնող ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը, եկեղեցին, նախքան փլուզվելը, վթարային վիճակում էր. հողմահարվել էին պատերը, շաղախները՝ քայքայվել, տանիքին ծառեր էին աճել, ինչն էլ նպաստեց եկեղեցու հարավային եւ արեւտյան կողմերի ամբողջական քանդվելուն: Չնայած նախատեսվել էին արդեն վերականգնողական աշխատանքները սկսել, բայց, ինչպես ասում են, ուրբաթը շաբաթից շուտ եկավ, եւ մինչեւ ձնհալը, եկեղեցին քանդվեց, ինչը հետագայում ավելի դժվարացրեց վերականգնողական աշխատանքները: *«Եկեղեցին 19-րդ դարի, եռանավ բազիլիկ կառույց է, որ օծվել է 1901թ.: Երբ հիմքերն ուսումնասիրում էինք, ավելի հին շերտեր հայտնաբերվեցին: Վստահ եմ՝ սա հին սրբատեղիի հիմքի վրա կառուցված եկեղեցի է: Վերականգնելիս նորովի ոչ մի միջամտություն չենք կատարել, վերականգնել ենք այնպես, ինչպես ժամանակին կար»,* – նշեց ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է Կապանի «Նորոգշին» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Ռազմիկ Փարսյան): Միջոցառման ընթացքում շնորհակալություն հայտնեցին նաեւ ՀՀ ժողովրդական վարպետ դարբին Աշոտ Գալստյանին:

Եկեղեցու վերաօծման արարողությունը եզրափակվեց սեղանների շուրջ՝ ավանդական ճաշատեսակների համտեսմամբ:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Խոսք՝ սիսիանցիներին



Սիրելի՛ սիսիանցիներ, ինչպես գիտեք, հոկտեմբերի 2-ին կայացած ՏԻՄ հերթական ընտրությունների նախնական արդյունքներով՝ առավելագույն քվեներ ստացել է Արթուր Սարգսյանը: Դա նշանակում է, որ համայնքի կառավարման ղեկն առաջիկայում կփոխանցվի համայնքի նորընտիր ղեկավարին: Դա ձեր որոշումն է, եւ ես հարգում եմ այն, անկեղծորեն ցանկանում, որ մեր բոլորի ակնկալիքները՝ կապված սիսիանյան հեռանկարի հետ, իրագործվեն:

Շնորհակալ եմ վստահության 3179 քվեների համար, որոնք ստացել եմ ձեզանից: Շնորհակալ եմ նաեւ այն ընտրողներին, ովքեր նախապատվությունը տվեցին այլ թեկնածուների: Մենք միասին 8-ամյա երկար ճանապարհ ենք անցել: Այդ ընթացքում հանդիպել ենք բազմաթիվ դժվարությունների, հաղթահարել դրանք, փորձել ենք լուծում տալ բոլոր այն խնդիրներին, որոնք առավել հրատապ են եղել Սիսիանի ու սիսիանցու համար: Երբեք բավարարված չենք եղել ձեռք բերվածով ու մշտապես ձգտել ենք հասնել ավելիին: Բնական է, որ հանրության շրջանում էլ ակնկալիքներն ավելին են եղել, քան հնարավոր է իրագործել համայնքային սուղ բյուջեի պայմաններում: Ներողություն եմ խնդրում, եթե ինչ-որ մի տեղ չեմ արդարացրել ձեր հույսերը, ինչ-որ մի տեղ անհաղորդ եմ եղել ձեր հոգսերին ու խնդիրներին: Ես ձգտել եմ լինել յուրաքանչյուր սիսիանցու կողքին, ուրախացել եմ յուրաքանչյուրի հաջողությամբ, յուրաքանչյուրի ձեռքբերումը համարել համայնքի ձեռքբերումը:

Շնորհակալություն եմ հայտնում համայնքապետարանի աշխատակազմին՝ 8-ամյա համատեղ արդյունավետ աշխատանքի համար, համայնքային ենթակայության կառույցների աշխատակիցներին, ովքեր առավելագույնն են արել ցանկալի արդյունքներ ապահովելու, հանրապետությունում Սիսիանն առավել ներկայանալի դարձնելու համար:

Շնորհավորում եմ Արթուր Սարգսյանին՝ ստանձնելիք Սիսիան համայնքի ղեկավարի անչափ պատասխանատու եւ պարտավորեցնող պաշտոնի համար: Մաղթում եմ անկոտրում կամք, նպատակասլացություն, նախընտրական խոստումներն ի կատար ածելու հաստատակամություն:

Ես իմ փորձով պատրաստ եմ հարկ եղած պահին լինել երիտասարդ քաղաքապետի կողքին: Սիսիանը բոլորիս տունն է, եւ յուրաքանչյուրս պարտավոր ենք մեր ավանդն ունենալ նրա շենացման գործում՝ անկախ զբաղեցրած դիրքից ու պաշտոնից:

**Միշտ ձեր կողքին՝**
**ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ**

# Խաչքար-հուշաղբյուր՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում

Սեպտեմբերի 26-ին Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում բացվեց խաչքար-հուշաղբյուր, որի կառուցումը նախաձեռնել է եկեղեցու անցյալ տարվա Խաչի քավոր Էդգար Բաղդասարյանը («Սլադկոֆֆ» ընկերության տնօրեն): Արարողությանը ներկա էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Խաչի օրհնության եւ լվացման կարգը կատարեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը եւ եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը:

Շնորհավորելով ներկաներին՝ տեր Մակար վարդապետ Հակոբյանը նշեց. *«Ով խաչ է կանգնեցնում, ուրեմն իր ննջեցյալների հոգին ուղղում է դեպի երկնքի արքայություն: Տիրոջ խաչը բոլորի փրկության գրավականն է, առանց որի չկա փրկություն: Թող այն լուսավորի ամենքի հոգին ու միտքը, եւ դառնանք ճշմարիտ հավատացյալներ, Սուրբ Խաչով զորացած կարողանանք շենացնել եւ զորացնել մեր երկիրն ու եկեղեցին»:*

Տեր Վահան քահանա Հեբոյանը տեղեկացրեց, որ խաչի կառուցումը նախաձեռնվել էր դեռեւս անցյալ տարվանից, իսկ խաչի օրհնության օրը պատահական չի ընտրվել. սեպտեմբերի 25-ին Հայ առաքելական եկեղեցին նշեց Վարագա Սուրբ Խաչի տոնը: Երջանիկ պատահականությամբ խաչի օրհնության օրը համընկավ Կոմիտաս վարդապետի ծննդյան օրվան:

Խաչքարի վարպետը Սեյրան Հայրապետյանն է:

Արարողության ավարտից հետո մարզպետ Ս.Խաչատրյանը ծանոթացավ եկեղեցու տարածքում Անկախության տոնին նվիրված կապանցի երիտասարդ քանդակագործների առաջին սիմպոզիումի աշխատանքների ընթացքին:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
**(091) 45 90 47,**
**(077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 05.10.2016թ.: